ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 44

ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 14 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան գյուղական համայնքի տարածքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

2. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

3. Զորավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների և «ՀՀ Կոտայքի մարզի Զորավան համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4.Զորավան գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
3. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
4. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 45-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան գյուղական համայնքի տարածքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
3. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
4. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հավելված

Զորավան համայնքի ավագանու

2015թ.դեկտեմբերի 15 թիվ 45-Ն որոշման

հհ	Տեղական տուրքերի տեսակները	Օրենքով սահմանված դրույքաչափերը /դրամ/	Առաջարկվող դրույքաչափերը /դրամ/
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝հիմնական օբյեկտների համար՝		
1)	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև	15.000	7.500
2)	սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝		
ա)	201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	30.000	15.000
բ)	501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	50.000	25.000
գ)	1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	50.000	25.000
դ)	3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	100.000	50.000
	ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝		
3)	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	3.000	1.500
4)	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	5.000	2.500
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝		
1)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև	3.000	1.500
2)	բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.		
3)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝		

	ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը		
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև	5.000	2.500
4.	Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝		
1)	ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	0-17.500	2.000
2)	ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	1.500-17.500	2.000
5.	Համայնքի տարածքում՝		
1)	բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.	0-350	350
2)	հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	150.000-200.000	150.000
3)	խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	30000-60000	30000
4)	համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝		
ա)	հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝	1000-6000	3000
բ)	ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝	0-1000	1000
5'	համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝	50.000	50.000
6.	Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝		
1)	առևտրի օբյեկտների համար՝	25.000-50.000	25.000
2)	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	50.000-100.000	50.000
3)	բաղնիքների (սաունաների) համար՝	200.000-500.000	200.000
4)	խաղատների կազմակերպման համար՝	500.000-1.000.000	500.000
5)	շահումով խաղերի կազմակերպման համար՝	250.000-500.000	250.000
6)	վիճակախաղերի կազմակերպման համար՝	100.000-150.000	100.000

7.	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝		
1)	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	1.000-2.000	1.000
2)	թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2.500-3.500	2.500
3)	այլ արտաքին գովազդի համար՝	500-1.500	1500
4)	մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝	3.000-5.000	3.000
5)	դատարկ գովազդային վահանակների համար՝	700	700
8.	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	0-10.000	2.000
9.	Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	50.000-100.000	50.000
10.	Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	0-10.000	5.000
11.	Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	0 – 500.000	250.000
12.	Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝		
1)	3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	2.500.000	2.500.000
2)	5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	5.000.000	5.000.000
3)	7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	7.000.000	7.000.000
4)	10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝	10.000.000	10.000.000
	Տեղական վճարների տեսակներ		
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		5.000
2.	Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		25.000
3.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճարներ		5.000
4.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել՝		
1)	Կենցաղային աղբի համար՝ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի		50

	հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական		
2)	Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսական		1500
5.	Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել		500

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 46

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 330000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին» N 31 որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
3. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
4. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 47

ԶՈՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ/ենթակետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Զորավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հաստատել «ՀՀ Կոտայքի մարզի Զորավան համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Զորավան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Զորավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 32 որոշումը:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թ. հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
3. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ

Հավելված 2
Զորավան համայնքի ավագանու
2015 թ. դեկտեմբերի 15 թիվ 47 որոշման

2016թ. «ՀՀ Կոտայքի մարզի Զորավան համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը 13
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիր	Հաստիքային միավորը	Ամսական դրույքաչափերի հարաբերակցությունը	Հավելում	Նպաստներ	Ամսական վարձատրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈՒԿ	Տնօրեն			1	120000			120000
2		Բուժքույր			0.5	95000			47500
3		Գլխ. հաշվապահ			0.5	95000			47500
4		Հաշվետար-գանձապահ			0.5	72752			36376
5		Դաստիարակ			2.24	100000			224000
6		Երաժշտության դաստիարակ			0.5	100000			50000
7		Դաստիարակի օգնական			2	72752			145504
8		Տնտեսվար			0.5	72752			36376
9		Գործավար			0.5	72752			36376
10		Խոհարար			1	72752			72752
11		Դռնապան			1	72752			72752
	ԸՆԴԱՄԵՆԸ				10.24	946512			889136

Համայնքի ղեկավար՝ Բ. Թովմասյան

Հավելված 1
Զորավան համայնքի ավագանու
2015 թ. դեկտեմբերի 18 թիվ 47 որոշման

2016թ. Զորավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը 13
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Ամսական Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	1	330000			330000
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական	-	1	255000			255000
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	255000			255000
4		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	120000			120000
5		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-2	1	120000			120000
6		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-3	1	120000			120000
7		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-4	1	120000		12000	132000
8		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	85000			85000
9		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-2	1	85000			85000
10		Գնումների համակարգող	Տեխնիկական սպասարկման		1	78000			78000
11		Կոմունալ ծառ. Աշխատակից	Տեխնիկական սպասարկման		1	85000			85000
12		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման		1	80000			80000
13		Պահակ	Տեխնիկական սպասարկման		1	80000			80000
									1825010
	Ընդամենը				13	1813000		12000	1825000

Համայնքի ղեկավար Բ. Թովմասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 48-Ն

ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Զորավան գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն՝

1)եկամուտների գծով՝ 55934.1 հազար դրամ,

2)ծախսերի գծով՝ 55934.1 հազար դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկանուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելվածի հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելվածի հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հավելված 5-ի:

7.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակ արգման՝ համաձայն հավելվածի հատված 6-ի:

8. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

1)համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև

2)սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՂԱՋԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
3. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
4. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ